Visa քարտերով «ԳԱՐՈՒՆԸ ՆՈՐ ԳՈՒՅՆ ՈՒՆԻ» Արշավի պայմաններ

1. Սույնով սահմանվում են «Ֆասթ Բանկ» ՓԲԸ կողմից (այսուհետ՝ Բանկ) **01.04.2026-31.05.2026թթ. ներառյալ Visa քարտերով իրականացվող (այսուհետ՝ Քարտ)** արշավի (այսուհետ՝ Արշավ) պայմանները:

2. Արշավն իրականացվում է Բանկի կողմից (հասցե՝ ք. Երևան, Նորք-Մարաշ, Գարեգին Հովսեփյան 32/6):

3. Հաճախորդները 01.04.2026-31.05.2026թ ժամանակահատվածում հնարավորություն կունենան Mobile հավելվածով պատվիրել Visa Gold քարտ առանց տարեկան սպասարկման վճարի քարտի գործողության ողջ ժամանակահատվածի համար, Բանկի կողմից առաջարկվող իրենց նախընտրած արժույթով, ընդ որում Mobile հավելվածով նշված ժամանակահատվածում հնարավոր է պատվիրել միայն մեկ անվճար Visa Gold քարտ:

4. Արշավին կարող են մասնակցել Ֆասթ Բանկի բոլոր Visa Քարտապան հաճախորդները, ովքեր ունեն Visa վճարահաշվարկային համակարգի որևէ քարտ կամ 01.04.2026-31.05.2026թթ.ընթացքում կպատվիրեն Visa վճարահաշվարկային համակարգի քարտերից որևէ մեկը և իրենց Visa քարտերով կիրականացնեն հանրագումարային 10,000 ՀՀ դրամի անկանխիկ վճարում: Հաճախորդներն իրենց քարտերով իրականացրած հանրագումարային յուրաքանչյուր 10,000 ՀՀ դրամ անկանխիկ վճարման դիմաց կստանան 1 պրոմոկոդ, որով էլ կմասնակցեն խաղարկությանը:

5. Այն հաճախորդները, ովքեր Արշավի իրականացման ժամանակահատվածում կպատվիրեն նոր՝ Visa վճարահաշվարկային համակարգի որևէ քարտ, **կստանան մեկ լրացուցիչ պրոմոկոդ**՝ անկախ նշված ժամանակահատվածում ձեռք բերած քարտերի քանակից: Ընդ որում, նշված պրոմոկոդը կհամարվի վավեր (ենթակա կլինի օգտագործման) այն դեպքում, եթե Հաճախորդը իր Visa քարտերով իրականացնի առնվազն հանրագումարային 10,000 ՀՀ դրամի գործարք՝ Արշավի իրականացման ժամանակահատվածում:

6. Իրականացված գործարքների դիմաց ստացված առավելագույն պրոմոկոդերի քանակը չի կարող գերազանցել 10-ը, բացառությամբ սույն պայմանների 5-րդ կետով նախատեսված դեպքի, համաձայն որի, Հաճախորդի կողմից ստացված պրոմոկոդների քանակը չի կարող գերազանցել 11-ը:

7. Հաճախորդը Արշավին կարող է մասնակցել Բանկի՝ իր բոլոր Visa Քարտերով:

8. Սահմանել որ, Քարտից քարտ փոխանցումները, քարտից այլ հաշիվ փոխանցումները, կոմունալ վճարումները /ներառյալ հեռահաղորդակցման, ինտերնետ ծառայության վճարները/, հաշիվների, քարտերի, էլեկտրոնային դրամապանակների համալրումները, վարկի մարումները, խաղատների և շահումով խաղերի խաղադրույքների, վիրտուալ խաղատների և խաղադրույքներ ընդունող ընկերությունների հաշիվների համալրումները, պետական մարմինների ծառայությունների դիմաց վճարները, տուրքերը, օրենքով պարտադրված հարկերի վճարները, Բանկի ներքին

համակարգերով իրականացված գործառնությունները, ինչպես նաև ցանկացած գործարք, որի գծով կատարվել է գումարի հետվերադարձ (chargeback, refund)՝ **չեն մասնակցում** անկանխիկ գործարքների հաշվարկին:

9. Բանկը պատասխանատվություն չի կրում POS տերմինալների խափանման, անսարքության պատճառով չիրականացված անկանխիկ գործարքների համար:

10. ՀՀ դրամով քարտերի դեպքում անկանխիկ գործարքների ծավալների հաշվարկը կատարվում է հաշվեգրված գումարի դրամային արտահայտությամբ, իսկ արտարժույթային քարտերի դեպքում՝ քարտի արժույթով հաշվեգրված գումարը փոխակերպած դրամի հաշվեգրման օրվա համար սահմանված ՀՀ ԿԲ փոխարժեքով:

11. Յուրաքանչյուր հաճախորդ խաղարկության ժամանակ կարող է հաղթել միայն մեկ անգամ: Եթե միևնույն հաճախորդը պատահականությամբ մեկից ավել անգամ ընտրվում է ծրագրի կողմից, ապա այն չեղյալ է համարվում և իրականացվում է նոր ընտրություն:

Արշավի ամփոփում

12. Արշավի ամփոփումը կիրականացվի Բանկի YouTube-յան պաշտոնական էջում՝ ուղիղ եթերում: Խաղարկությունը տեղի կունենա Արշավի ավարտից հետո՝ հունիսի 30-ին, ժամը՝ 15:00-ին: Հաղթողները կորոշվեն պատահականության սկզբունքով՝ Pretty Random համակարգով, որտեղ կընտրվեն հաճախորդներին ուղարկված պրոմոկոդերը: Բանկը 48 ժամվա ընթացքում առնվազն 3 անգամ կփորձի կապ հաստատել հաղթող մասնակցի հետ՝ Բանկում մասնակցի կողմից տրամադրված հեռախոսահամարով:

13. Պատահականության սկզբունքով համակարգի կողմից ընտրված պրոմոկոդերից բացի կընտրվի ևս 5 պահեստային պրոմոկոդ, որոնք կօգտագործվեն ըստ հերթականության այն դեպքում, երբ հաղթող մասնակիցներից որևէ մեկի հետ հնարավոր չի լինի կապ հաստատել կամ կիրաժարվի շահումից:

14. Քարտը/երը Արշավի ամփոփման ժամանակ պետք է լինի/են գործող կարգավիճակով:

15. Պրոմոկոդերը Հաճախորդների էլեկտրոնային հասցեներին կուղարկվեն Արշավի ավարտից հետո մինչև սույն թվականի հունիսի 25-ը:

16. Խաղարկության ամփոփումից հետո հաղթող մասնակիցների նույնականացնող պրոմոկոդերը կիրապարակվեն Բանկի սոց. հարթակների պաշտոնական էջերում:

17. Այն դեպքում, երբ հաճախորդի հետ սահմանված ժամկետում չի ստացվում կապ հաստատել կամ հաղթող հաճախորդը 15 օրացուցային օրվա ընթացքում չի մոտենում Բանկ ստորագրելու Արշավի արդյունքում ունեցած շահումը ձեռք բերելու հանձման-ընդունման ակտը, ապա տվյալ մրցանակը փոխանցվում է պահուստային պրոմոկոդերի հաճախորդներին՝ ըստ պրոմոկոդի ընտրման հերթականության:

18. Արշավի շրջանակներում խաղարկվում են՝

№	Մրցանակ	Խաղարկվող մրցանակի քանակ
1	500,000ՀՀ դրամ*	10 հատ
*Հաճախորդին տրամադրվող գումարը չի ներառում ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը:		

19. Հաղթող ճանաչված մասնակիցների գումարները փոխանցվում է վերջիններիս քարտային հաշվին և/կամ ընթացիկ բանկային հաշվեհամարին՝ Բանկի ընտրությամբ:

20. Արշավին կարող են մասնակցել 18 տարին լրացած Քարտապանները՝ բացառությամբ Բանկի աշխատակիցների և Բանկի հետ փոխկապակցված անձանց:

21. Ծրագրային խափանումների կամ անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքում Բանկը պարտավորվում է Արշավն իրականացնել նման խափանման կամ անհաղթահարելի ուժի ազդեցության վերացումից հետո՝ հնարավորինս սեղմ ժամկետներում: